ՊՈՌՇՅԱՆ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՏՈՀՄԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Զաքարյանների օրոք առաջացած ֆեոդալական տների ծագումնաբանության հետազոտությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի XI—XIII դդ. պատմության մի շարք հարցերի լուսաբանման համար։ Մասնավորապես, դա կօգնի ավելի հստակ պատկերացնելու XI դ. երկրորդ կեսին ֆեոդալական տների կազմալուծման պրոցեսը, դրա հետևանքով ֆեոդալական միջավայրում տեղի ունեցած տեղաշարժերը, նոր տների կազմավորման մանրամասները, IX—XI դդ. ավանդույթների հաջորդականությունը XII—XIII դդ. մշակույթի և այլ բնագավառներում։

*Նորաստեղծ տոհմերից էին նաև Պռոշյանները, որոնք XII—XIII դդ. մեծ դեր են կատարել Երկրի ռազմաքաղաքական ու մշակութային կյանքում։ Պռոշյանների ներկայացուցիչները գրավոր աղբյուրներում հիշատակվում են XII դ. վերջից։ Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ 1222 թ. զիշխանների դեմ ճակատամարտում Իվանե աթաբեկի բանակում էին «Գրիգոր որդի Հաղբակայ, Եղբայր քաջին Վասակայ և Պապաքն Նորուն եղբօրորդի զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաք, Մկռէմ, Հասան զոր Պռոշն կոչէին» և նշում, որ «Սոքա զաւառաւ խաչենեցիք լին յերևելի ազգէ...»[1]։ Նույն Վասակի մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. «զՎասակ Խաչենեցի, զհայրն... պարոնին Պռոշայ, կացուցանէն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»[2]։ Մխիթար Այրիվանեցին իր հերթին հաղորդում է նույնը. «Վասակ՝ որդի Հաղբակայ և երեք որդիքն իւր՝ Պապաքն, Մկռէմն և քաջ Պռոշ՝ եկեալ ի Խաչենոյ, բազում արիութիւնս ցուցին յայլասէրս և բազում բարութիւնս առ ազգս քրիստոնէից»[3]։ Հիմք ընդունելով մեջբերված վկայությունները, Գ. Հովսեփյանը եզրակացրել է, որ Վասակ Խաղբակյանը Խաչենից Վայոց ձոր է եկել 1201 թ.[4]։ Մյուս ուսումնասիրողները հետևել են Գ. Հովսեփյանին[5]։ Սակայն պատմական երկերում կան տվյալներ, որ Խաղբակյանները Սյունիքում էին ավելի վաղ շրջանից։ Համաձայն Ստեփաննոս Օրբելյանի մի քանի տեղեկությունների, XI դ. կեսերին Խաղբակյանների ներկայացուցիչները բնակվում էին Սյունիքի Հաբանդ գավառում։ Այսպես, պատմիչը հաղորդում է, որ 1046 թ. սելջուկներն անսպասելիորեն ներխուժել էին Սյունիք և ավերել Տաթևի վանքը։ Վերջինիս վերականգնմանն օգնել էին Սյունյաց Սմբատ Բ թագավորը և իշխանները, որոնց թվում էր Դլեն Խաղբակյանը. «Իշխան մի Դլեն անուն՝ որդի Խաղբակայ, տայ յիւր հայրենի ժառանգութեանցն գնոտ գիւղն և զնոտագետոյ մեծ այգին, և ի Վժանիս ղծաղկիկ որ է տեղի բազում անդաստանաց, ...և գրէ ինքեան կտակ վճռի...»[6]։ Հետագայում, Դլենը Նորեաց վանքի բաժնից Տաթևի վանքին նվիրել է Բոլորաքար կոչված վայրը[7]։

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 205, 206։ Հմմտ. «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 350։

2 Ստեփանոս Օրբելյան, էջ 397. հմմտ. էջ 350, 352, 364։

3 «Մխիթար Այրիվանեցւոյ պատմութիւն Հայոց», ի լուս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 65։

4 Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 18։

5 Հակոբ Մանանդյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1978, էջ 164, Լ. Հ. Բաբայան, Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը XIII—XIV դդ., Երևան, 1964, էջ 55։

6 Ստեփանոս Օրբելյան, էջ 312—315։

7 «Սա առնոյր և զրոլորաքարն Նորեաց բաժինն ի Դլենէ՝ որդւոյ Խաղբակայ» (Ստեփանոս Օրբելյան, էջ 322. հմմտ. էջ 294)։ Բոլորաբերդը, Բոլորաձորը գտնվում էին Վայոց ձորում (Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 19)։

Այսպիսով, Ստեփանոս Օրբելյանի տվյալներից երևում է, որ XI դ. կեսերին Դլեն Խաղբակյանը բնակվում էր Սյունիքում և նրան էր պատկանում Խոտ գյուղը, որը գտնվում էր Սյունիքի Հարանդ գավառում[8]։

Մեջբերելով Ստեփաննոս Օրբելյանի վկայությունները Դլենի մասին, Գ. Հովսեփյանը գրում է, որ թեև Դլենը կալվածքներ ուներ Սյունյաց աշխարհում, բայց նրա, ինչպես նաև նրա ժառանգների բնակավայրը Արցախում էր[9]։ Սակայն մեծանուն գիտնականը չի պարզաբանում, թե ինչու Խաղբակի որդին պետք է կալվածքներ ունենար մի գավառում, որը պատկանում էր Սյունյաց իշխաններին։ Հայտնի է, որ IX դ. սկզբին Հարանդ գավառը պատկանում էր Սյունյաց գահերեց իշխան Փիլիպեին (821—848), այնուհետև Հարանդն և Շնհերը պատկանել են Փիլիպեի հաջորդ գահերեց իշխան Վասակ-Իշխանիկին (851—892) և վերջինիս որդի Փիլիպե Բ գահակալ իշխանին (892— մոտ. 943)[10]։ Հարանդի Խոտ գյուղը 881 թ. պատկանել է Վասակ-Իշխանիկի որդի Գրիգորին, որը 906 թ. Տաթևի վանքի նավակատիքին նշված գյուղը նվիրել է վանքին[11]։ Ավելի ուշ Հարանդ գավառում կալվածքներ ունեին Սյունյաց թագավոր Սմբատ Ա-ի (970—998) որդիները՝ Վասակն ու Սեադան, որոնք Տաթևի վանքին նվիրել են Տեղ գյուղը, իսկ 1019 թ. Վասակ Սյունյաց թագավորը (998—1040, վերը նշված Սմբատի որդին) Հարանդ գավառը հաստատում է որպես Տաթևի վանքի սեփականություն[12]։

Այսպիսով, IX դ. սկզբից մինչև 943 թ. Հարանդ գավառը պատկանում էր Սյունյաց իշխաններին[13], 943 թ. մինչև 1046 թ. գավառի վիճակը մնում է անորոշ, բայց ինչպես տեսանք, X դ. երկրորդ կեսին Հարանդը Սյունյաց թագավորների տնօրինության տակ էր։

Այս փաստերի լույսի տակ առայժմ անհասկանալի է, թե Խաղբակի որդի Դլենը ինչպես հայտնվեց Հարանդում։ Պարզ է, որ նրան չէր կարող պատկանել ամբողջ գավառը։ Կարելի է ենթադրել, որ նա Սյունյաց թագավորից ստացել էր ոչ մեծ տիրույթ՝ Խոտ, և մի քանի այլ գյուղեր՝ որպես ավատ։ Բայց թե ե՞րբ է նա եկել Սյունիք և որտեղի՞ց՝ առայժմ պարզ չէ։ Մեզ հայտնի է երկու փաստ՝ XI դ. կեսերին Դլեն Խաղբակյանը բնակվում էր Հարանդում, մյուս կողմից պատմիչները հաղորդում են, որ Խաղբակյանների ներկայացուցիչները Սյունիք են տեղափոխվել XIII դ. սկզբին։ Հնարավոր է արդյո՞ք ենթադրել, որ Դլենը նույնպես Սյունյաց իշխաններից էր, որի հետնորդներն անցել են Խաչեն, իսկ ավելի ուշ նորից վերադարձել Սյունիք և հաստատվել Վայոց ձորում։ Այդ մասին տվյալներ չկան։ Սակայն կան տվյալներ, որոնք մատնանշում են Խաղբակյանների ազգակցությունը ֆեոդալական այլ տոհմի հետ։

XII—XIV դդ. հյուսիսային Հայաստանի Տաշիր գավառում և Վեդի գետի վերին հոսանքում տիրույթներ ունեին Մամիկոնյանները։ Նրանց վարչական կենտրոնն էր Դսեզ գյուղը։ Տաշիրում հաստատված Մամիկոնյանների տան հիմնադիրն էր, հավանաբար, իշխան Համազասպը, որովհետև նրա հաջորդներն արձանագրություններում հաճախ անվանվում են «Համազասպյանց թոռներ»։ Պատմիչներից այդ իշխանության մասին սուղ տվյալներ կան Կիրակոս Գանձակեցու մոտ, իսկ հիմնական աղբյուրն իշխանության հոգևոր կենտրոն-Բարձրաքաշ վանքի վիմագրությունն է[14]։ Բարձրաքաշ վանքը հիմնվել է XIII դ. առաջին քառորդում, գլխավոր եկեղեցին (Մեծ կամ Աստվածածին) կառուցվել է 1221 թ., ժամատունը՝ 1245։ Մեզ զբաղեցնող հարցի կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ժամատան արձանագրություններից մեկը, գրված 1247 թ.։ Այդ վիմագիրը վկայում է, որ Խաղբակյան Պողոս իշխանը դրամական նվիրատվություն

---

8 Ստեփաննոս Օրբելյան, էջ 517։

9 Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 15։

10 Սրանք Սյունյաց Վայոց ձորի ճյուղի ներկայացուցիչներն էին (Հ. Մ. Ութմազյան, Սյունիքը IX—X դդ., Երևան, 1958, էջ 89, 93, 124, 125, 287, 293, 295. հմմտ. Ստեփաննոս Օրբելյան, էջ 269, 298)։

11 Ստեփաննոս Օրբելյան, էջ 216, 232, 234. հմմտ. Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 142, 144։

12 Ստեփաննոս Օրբելյան, էջ 291, 305, 306։ Բայց դավառը Տաթևի սեփականությունն էր ավելի վաղ. 1006 թ. Հայոց կաթողիկոս Սարգիսը գավառը նշում է Սյունյաց վիճակի կազմում (Ստեփաննոս Օրբելյան, էջ 310)։

13 Փիլիպե Բ-ն ուներ որդիներ, բայց նրանց մասին ոչինչ հայտնի չէ։

14 Գ. Սարգսյան, «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը («Էջմիածին», 1951, է—Ը, Ը—Թ, ԺԱ—ԺԲ)։

է կատարել ժամատան կառուցման համար. «ՈՂԶ (1247) ի թվականութեանս Հայոց և յիշխանութեան տիէզերական իշխանաց իշխանի Աւագի որդո աթաբակ Իանէի ես Պռաւշ որդի Վասակա և թոռն Խաղբակա միաբանեցա սբ ուխտիս Բարձրաքաշիս և էտու ի շինութիւն տանս։ Ճ։ դեկաս...»[15]։ Բարձրաքաշ վանքը Դսեղի իշխանական տան հոգևոր կենտրոնն էր և նրա ժամատան կառուցման ծախքերը, բնականաբար, պետք է հոգային իրենք՝ Մամիկոնյանները։ Տվյալ իշխանության հոգևոր կենտրոնի կառուցման համար այլ տոհմի ներկայացուցիչների կողմից դրամական նվիրատվություններ կատարվում էին հազվադեպ և դրա համար պետք է լինեին հատուկ պատճառներ։ Օրինակ, Դսեղի Մամիկոնյանները նվիրատվություններ են կատարել Սանահնի վանքին կամ նույն Պռոշ իշխանը՝ Վաչուտյաններին պատկանող Հովհաննավանքին։ Առաջին դեպքում դա բացատրվում է նրանով, որ Մամիկոնյանները սերտ կապեր ունեին հյուսիսային Հայաստանի հոգևոր կենտրոններ Սանահնի ու Հաղբատի հետ և նույնիսկ նրանց ներկայացուցիչներից մեկը՝ Սարգսի որդի Համազասպը, եղել է Հաղբատի առաջնորդը[16]։ Երկրորդ դեպքում Պռոշ իշխանը Հովհաննավանքին կատարել է նյութական նվիրատվություն[17]։ Այդ փաստը կարելի է բացատրել Վաչուտյանների և Պռոշյանների միջև եղած խնամիական կապերով (Վաչե Վաչուտյանի որդի Քրդի կին Խորիշահը Դսեղի Մամիկոնյաններից էր)[18]։ Պռոշի նվիրատվությունը Բարձրաքաշ վանքին նույնպես պատահական չի կարելի համարել. անկասկած, այն պայմանավորված էր որոշակի պատճառներով։ Այս առումով ուշագրավ է Պռոշ իշխանի մոր անունը՝ Մամա[19]։ Այդ անձնանունը Մամա, Մամիկ, Մամքան և այլ ձևերով բնորոշ է Մամիկոնյան տոհմին։ Մամիկոնյանների տոհմական անունների գործածությունը Պռոշյանների մոտ (Մամա, Խորիշահ) թերևս բացատրվի երկու տոհմերի մերձավորությամբ։ Այդ մերձավորությունը կարելի է ցույց տալ Խաչենի Կոշիկ անապատի վիմագրերի միջոցով։

Վերն ասվեց, որ Դսեղի Մամիկոնյան տան հավանական հիմնադիրն էր Համազասպ Մարծպանը (կամ Համազասպենց Մարծպանը)։ Նրա որդի Սմբատն ուներ չորս զավակ, որոնք հիշվում են Սանահնի 1191 թ. արձանագրությունում[20]։ Նրանցից մեկը՝ Հասանը, տեղափոխվել է Խաչեն. այդ մասին են վկայում վերոհիշյալ Կոշիկ անապատի արձանագրությունները։ Կոշիկ անապատը գտնվում է Խաչենագետի վտակ Քոլատակի ջուր կոչվող գետի հովտում։ Այստեղ են նաև Մեծիրանց և Հավապտուկ վանքերը, Խոխանաբերդը, Քոլատակ գյուղը։ Վերջինից 10—12 կմ հեռավորությամբ կառուցված է Կոշիկ անապատը[21]։ Գ. Հովսեփյանի կարծիքով Քոլատակ գյուղը եղել է Պռոշյանների նախնական բնակավայրը, իսկ Հավապտուկը նրանց տոհմական դերեզմանատունը[22]։

Կոշիկի ս. Ստեփանոս եկեղեցու 1265 թ. գրած արձանագրությունը (մասամբ եղծված) կարևոր տեղեկություն է պարունակում վերոհիշյալ Հասանի և նրա զարմերի մասին։ Առաջին տողում կարդացվում է «Հասանայ եւ Մամախաթունին թոռն...», հինգերորդ և հաջորդ տողերում կարդացվում է «Խէրխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս... ես Խերխանս... շինեցի զսբ Ստեփանոսս եւ նորոգեցի զայլ եկեղեցիքս եւ զարդարեցի Մխիթարք

---

15 Գ. Սարգսյան, նշվ. հոդվ. («էջմիածին», 1951, ԺԲ, էջ 50), Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 303։

16 Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 164, 178, 200, 207 և այլն։

17 Այդ մասին Պռոշը գրում է. «...ես Պռաւշ, որդի մեծի իշխանին Վասակա, միաբանեցա սբ ուխտիս եւ էտու ինչս...», իսկ եկեղեցին պատարագ է խոստանում նրա մայր Մամաքին (Կարո Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 91, Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 303, 304)։

18 Խորիշահը Մամիկոնյան Մարծպանի և Մամքանի դուստրն էր (Կարո Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 90, 103)։

19 Պռոշի հայր Վասակ Խաղբակյանը կառուցել է Կեչառիս վանքի Կաթողիկե եկեղեցին. շինարարական արձանագրությունում նա հիշում է իր մորը՝ Խոշաքին և կնոջը՝ Մամային (Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 302)։

20 Կարո Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 106։

21 «Դիվան հայ վիմագրության», պրակ Ֆ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 23, 24։

22 Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 17։

եղբայր իմ... ես Սեւադա ավի զԳրիգորանանց, զՄորնզանանց, զԳելվարդանց ի սր եկեղեցիս... յամն :Ժ: աւր ժամ :Բ: Հասանա՝ զատկին :Բ: Մամախաթունին վարդավառին, :Ա: Ռոզուքանա... :Բ: Խէրխանին յայտնութե(ան)ցն։ :Բ: ասթին (որչափ...) կատարեաւ ...Գրեցաւ դիրս ի թվիս հայոց ՉԺԴ (1265)»23։ Այս արձանագրության մեջ հիշված են Հասանը, նրա կին Մամախաթունը և նրանց զավակները՝ Խերխանը, Սեւադան, Մարծպանն ու Մամիկոնը, Ռոզուքանը24։ Նույն անձնավորությունները հիշվում են մեկ այլ գրավոր աղբյուրում։ Դա 1237 թ. գրված «Կարմիր ավետարան» կոչվող ձեռագրի հիշատակարանն է, որտեղ նույնպես հիշատակված են Հասանի ընտանիքի անդամները. «...Մարծպանս Մամիկոն... ավաք Շիկաքարայ Աստուածածին... ետ յիւր հոգւոյն թարխան արարաք եւ տվաք զսպասաւորք եկեղեցւոյս Դ աւ ժամ զո... ին. եւ Ա աւրն հաւր մերոյ Հասանայ, եւ... աւրն եղբայր մերոյ Սեւադա՝ ի եւ Բ աւրն մերոյ Մամախաթունին... Գրեցաւ դիրս ի թվ...»25։ Այս հիշատակարանում հիշված են նույն Հասանը, նրա կինը և որդիներից երեքը (բացի Խերխանից)։ Շիկաքարը, որին Մարծպանն ու Մամիկոնը նվիրատվություն են կատարել, գտնվում էր Մեծիրանց (Մեծառանք) գավառում26, իսկ նույն գավառի Մեծիրանց վանքը կառուցված է։ եղել Քալատակ գյուղից 2 կմ հյուսիս27։

Նկատի ունենալով հիշյալ արձանագրության տվյալները, Մարծպան և Մամիկոն անունները, որոնք բնորոշ են Դսեղի Մամիկոնյաններին, Գ. Սարգսյանը կարծիք է հայտնել, որ վերոհիշյալ Հասանը պատկանել է Համազասպյանների ֆեոդալական տանը։ Ելնելով այն փաստից, որ Հասանյանները (Հասանը և նրա զավակները) Դսեղի վիմագրություններում չեն հիշատակվում, նա եզրակացրել է, որ Հասան Համազասպյանն ընտանիքով Տաշիրից տեղափոխվել է Խաչեն28։

Մեր կարծիքով Գ. Սարգսյանը ճիշտ է կռահել, որ Կոշիկ անապատի արձանագրության մեջ հիշատակված անձինք Համազասպյան-Մամիկոնյան տան ներկայացուցիչներ են և Տաշիրից տեղափոխվել են Խաչենի Մեծիրանց գավառ։ Սակայն Կոշիկի և Հավապտուկի արձանագրություններից նաև երևում է, որ այս նույն գավառում էին գտնվում Գոռշյանների կալվածքները։ Գոռշ Խաղբակյանը 1244 թ. Կոշիկի անապատում թողել է հետևյալ արձանագրությունը. «ՈՂԴ (1244)... ես Գոռշ, որդի իշխանին Վասակա, յուսով միաբանեցա Կոշիկ անապատոյ...»29։ Հավապտուկի վանքում XII դ. վերջին քառորդում Հասան Խաղբակյանի անունից արձանագրություն է փորագրվել. «Ես Հասան, որդի Խաղբակայ, կանգնեցի զխաչերս ի վերայ տապանի ՈԼԴ (1184)»30։ Այս Հասանին Գ. Հովսեփյանը համարում է Խաղբակ իշխանի որդին և Ջաջուռ Գոռշյանի եղբայրը։ Հավապտուկ վանքի մոտի խաչքարի վրա կա մի արձանագրություն Ջաջուռի անունից. «Թուականն ՈՀԴ (1224) էր ես Ջաջուռ որդի Խաղբակայ կանգնեցի զխաչս ի տապանի որդւոյ իմոյ Սնապատաս»31։ Այս Ջաջուռը Գոռշի հայր Վասակ իշխանի եղբայրն էր և նրա զինակիցը։ Կեչառիսի արձանագրություններից մեկում Վասակը գրում է. «Ի թուականն ՈԿԴ (1214)... եղփարքն իմ եւ զինակիցք Ջաջուռ և Գրիգոր եւ սիրելի որդիք իմ հարազատք Գապաքն, Մքդէմ եւ Հասան երկանուն Գոռշ...»32։ Այսպիսով, 1184 թ. արձանագրության հեղինակ Հասան Խաղբակյանը Վասակ և Ջաջուռ Խաղբակյանների եղբայրն է։

---

23 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, էջ 29։

24 Արձանագրություններում հիշված Գրիգորանանց, Մորնզանանց և Գելվարդանց անունները Գ. Սարգսյանի կարծիքով վերաբերում են կամ շինական ընտանիքներին կամ նվիրաբերվող հոգերին (Գ ա գ ի կ Ս ա ր գ ս յ ա ն, Նոր նյութեր Համազասպան-Մամիկոնյան իշխանական տան վերաբերյալ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 3, էջ 79)։

25 Հ. Ք յ ո ւ ր տ յ ա ն, Ջիկագոյի համալսարանի հայերեն ձեռագրերը («Սիոն», 1971, № 7—8, էջ 273)։

26 «Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի», քննական բնագիրը և ներածությունը՝ Վ ա ր ա գ Ա ռ ա ք ե լ յ ա ն ի, Երևան, 1983, էջ 326։

27 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, էջ 11, 12։

28 Գ ա գ ի կ Ս ա ր գ ս յ ա ն, նշվ. հոդվ., էջ 79։

29 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, էջ 28։

30 Նույն տեղում, էջ 34, տե՛ս նաև Й. А. Орбели, Бытовые рельефы на хаченских крестных камнях XII и XIII веков («Избранные труды», Ереван, 1963, с. 198).

31 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., էջ 17։

32 Նույն տեղում, էջ 300։

Վերջին երեք արձանագրություններից երևում է, որ Պռոշյանների տիրույթները Խաչենում համընկնում էին Հասան Մամիկոնյանի կալվածքի հետ Մեծիրանց գավառում։ Արդյոք դա պատահականությո՞ւն է։

Ջաչուռ իշխանն ուներ Վանենի անունով դուստր, որը 1232 թ. պատվիրել է մի ձեռագիր և նվիրել Հավապտուկին[33]։ Նրա հիշատակարանում Վանենին իրեն անվանում է Բակ իշխանի թոռ և գրում, որ նա Ավարայրի ճակատամարտից հետո «գնաց փախստեայ ի ամրոց ոմն եւ զարք պարսից եւ ուրացեալն Վասակ զհետ մտեալ, պատեցին շուրջ զամրոցաւն։ Ապա Բակ իշխանը գիշերով փախել է «յամուրսն Արցախայ եւ կեցեալ... մինչեւ յայս բարեպաշտ իշխանս Ջաչուռ և ի սմին որդիացեալս»[34]։ Վանենու հիշատակարանը Գ. Հովսեփյանին հիմք է տվել եզրակացնելու, որ Բակը ոչ թե Խաղբակի հայրն էր, այլ տոհմի նահապետը[35]։ Դ. Հովսեփյանն իրավացիորեն նկատում է, որ Բակ իշխանի պատումի հիմքում ընկած է Եղիշեի վկայությունը։ Վերջինս հաղորդում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո պարսից զորավար Մուշկան Նյուսալավուրտը պաշարել էր մի ամրոց, ուր ամրացել էին հայ իշխաններ ու հոգևորականներ։ Նրանց թվում էր «Մի ոմն ի քաջ զօրականէն Հայոց, որ անկեալ էր ի բերդն փախստեամբ, Բակ անուն, ելեալ ի պարիսպն... եւ գնաց ի բերդէ անտի, և ոչ կարացին ձեռն արկանել ի նա»[36]։ Եղիշեն չի ասում, թե ուր գնաց Բակ իշխանը բերդից փախչելուց հետո։ Նա միայն հայտնում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո նախարարներից շատերն իրենց ընտանիքներով ապաստանել էին Խաղտիքում, Տմորիքում և Արցախում[37]։ Բակի փախստավայրը հայտնի է Վանենու հիշատակարանից, ուր ասված է, որ Վանենին ձեռագիրը պատվիրել է Ջաչուռի հիշատակին և նվիրել Հավապտուկին, որը Ջաչուռի և նրա նախնիների «բնական տունն էր» և շիրիմը[38]։ Վանենու հիշատակարանից պարզ երևում է, որ Պռոշյանների նահապետ Բակ իշխանը Արցախ է տեղափոխվել այլ երկրամասից, իսկ Արցախում նրա բնակավայրը եղել է Մեծիրանց գավառում, ուր կալվածքներ ունեին նրա հեռավոր հետնորդները՝ Ջաչուռն ու վերջինիս ժառանգները։ Եղիշեի և Վանենու վկայությունները հաստատում են, որ Պռոշյանների նախնիները խաչենցիներ չեն եղել։ Ղ. Ալիշանը Վասակին և նրա որդի Պռոշին անվանում է «Հաղբակյան կամ Վարդանյան քաջարի իշխաններ»[39], նկատի ունենալով, որ հիշատակարաններից մեկում Պռոշի տոհմը անվանված է «Վարդանանց»։ 1322 թ. Կուքի վանքում ոմն Մարկոս կրոնավոր պատվիրել է Լամբրոնացու պատարագի մեկնությունը, որի հիշատակարանում ասված է, որ ձեռագիրը գրվել է «յիշխանութիւն նահանգիս մերոյ թոռին Պռոշա դոր ի յազգէն Վարդանանց՝ Վասակա»[40]։ Գ. Հովսեփյանը ենթադրում է, որ Վասակի տոհմը կոչվել է «Վարդանանք» թերևս Բակի՝ Վարդանանց իշխաններից յինելու պատճառով[41]։ Բայց հեղինակը չի ճշտում, ինչ պետք է հասկանալ «Վարդանանց» իշխան ասելով՝ Վարգան Մամիկոնյանի կողմնակից թե տոհմակից։

Անկախ դրանից Պռոշյանների և Մամիկոնյանների սերտ կապերը XII—XIII դդ. ակներև են։ Պռոշ իշխանի մասնակցությունը Բարձրաքաշ վանքի ժամատան կառուցմանը, նրա նվիրատվությունը Կոշիկ անապատին, ուր գտնվում էր Հասանյան-Մամիկոնյանների գերեզմանատունը, երկու տոհմերի կալվածքների տեղադրությունը նույն (Մեծիրանց) գավառում, Մամիկոնյանների ավանդական անունների գործածությունը Պռոշյանների մոտ՝ մատնանշում են նշված տոհմերի մերձակցությունը, որն ավելի խոր արմատներ ուներ, քան ֆեոդալական տների միջև սովորական կապերն էին։ Դրանք ծագումնաբանական կապեր էին, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ Պռոշ իշխանի նախնիները սերել են Մամիկոնյան տոհմից։

---

33 Հիշատակարանում գրված է. «Վանենին... դուստր բարեպաշտ իշխանին Ջաչռոյ որդոյ Խաղբակայ թոռն Բակ իշխանին» (Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 14, 343)։

34 Նույն տեղում, հավելված Բ, էջ 343։

35 Նույն տեղում, էջ 14։

36 «Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 122, 123։

37 Նույն տեղում, էջ 125։

38 Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 343, 344։

39 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 18։

40 Նույն տեղում, էջ 487, Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 30։

41 Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 14։

ПРОИСХОЖДЕНИЕ ФЕОДАЛЬНОГО ДОМА ПРОШЯНОВ

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

В Захаридскон Армении, в политической и культурной жизни страны большую роль играл род Прошянов-Хахбакянов, особенно князь Прош. В предшествующую эпоху (при Багратидах—IX—XI вв.) род Прошянов не был известен. Письменные источники указывают на родословную связь Прошянов с феодальным домом Дсехских Мамиконянов в Ташире. По данным ряда эпиграфических источников устанавливается генеалогическая связь Հасана Мамиконяна с Прошянами-Хахбакянами. Основанный же князем Прошем и его отцом Васаком феодальный дом современники называли «Хахбакенц» по имени деда Проша-Хахбака, а фамилия Прошян закрепилась за ними в дальнейшем.